

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐՊԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Գ. Բ. ՂԱՆԻԵԼՅԱՆ

Վարչական արդարադատությունն հասկացության բնորոշման խնդրում առկա են լուրջ դժվարություններ և տարաձայնություններ. որոնք էլ պայմանավորում են այդ ինստիտուտի գիտական բնորոշման կարևորությունը: Թերևս բարդությունը պայմանավորված է ինչպես այդ ինստիտուտի բազմաճյուղային բնույթով, այնպես էլ դրա բովանդակությունը և կիրառման սահմանները կանխորոշող, հաճախ իրարամերժ, գործոնների առատությամբ:

Գործադիր իշխանության մարմինների կողմից քաղաքացիների խախտված իրավունքների պաշտպանությունը վերահսկելու խնդիրների նկատմամբ ձևավորվել են տարաբնույթ մոտեցումներ, ինչը և պատճառ է դարձել այն բանի, որ մարդկանց իրավունքների դատական պաշտպանությունն իրականացվում է վարչական արդարադատության ոչ միատեսակ համակարգերով: Ընդունված տեսակետի համաձայն՝ վարչական արդարադատությունը գործադիր իշխանության մարմինների ապօրինի ակտերից ու գործողություններից անհատի իրավունքների պաշտպանության հիմնարար լծակն է¹:

Վարչական արդարադատության բովանդակության առնչությամբ բանավեճը շարունակվում է ավելի քան երկու դար: Առկա են տարաձայնություններ ինչպես «վարչական արդարադատություն» հասկացության, այնպես էլ այդ ինստիտուտի կիրառման եղանակների ու սահմանների առնչությամբ: Ամենալայն իմաստով վարչական արդարադատություն ասելով նկատի է առնվում պետական կառավարման մարմինների կողմից իրենց լիազորությունների իրականացման գործընթացում քաղաքացու և այդ մարմինների միջև ծագած վեճերի քննության ընթացակարգը: Թերևս հենց այդ նկատառումով է արդարադատության նշված տեսակը կոչվում վարչական: Միաժամանակ ճշգրիտ բնորոշել վարչական արդարադատությունն հասկացությունը դժվար է. քանի որ վերջինիս բովանդակությունը թե՛ իրավունքի տեսությունում և թե՛ օրենսդրությունում միանշանակ ներկայացված չէ: Վերջին հաշվով, վարչական արդարադատության կոնկրետ դրսևորումների վրա ազդում են այնպիսի սոցիալական, տնտեսական ու քաղաքական հանգամանքներ, որոնք չեն կարող միատեսակ լինել բոլոր երկրներում: Նշված բնորոշման կողմնակիցների և դրանց առանձնահատկությունների մասին առավել հանգամանորեն կխոսվի ստորև:

Միանշանակ կարելի է փաստել, որ Հայաստանի իրավունքի տեսությունում դեռևս չի մշակվել վարչական արդարադատության ավարտուն հայեցակետ: Ավելիին, այն դեռևս սաղմնային վիճակում է ոչ միայն գործող օրենսդրությունում, այլև հիմնախնդրին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերում:

Այսպես, վարչական արդարադատության բնորոշմանը մասնակիորեն առնչվում է միայն մեկ օրենսդրական ակտ՝ «Դատարանակազմության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Մասնավորապես, նշված օրենքի հոդված 3-ում ամրագրված են արդարադատության իրականացման հետևյալ տարատեսակները.

¹ Տե՛ս Ю. Н. Стариков, Административная юстиция. Теория, история, перспективы, М., 2001, էջ 35:

«1) մարդու և քաղաքացու ազատությունները, իրավունքներն ու օրինական շահերը, պետության և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը շոշափող քաղաքացիական, տնտեսական վեճերի վերաբերյալ գործեր դատական նիստերում քննելու և լուծելու միջոցով»:

2) վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և լուծելու միջոցով (ընդգծումը մերն է - Գ. Դ.):

3) դատական նիստերում հանցագործությունների վերաբերյալ գործեր քննելու, հանցանք կատարած անձանց մեղավոր ճանաչելու, նրանց նկատմամբ օրենքով սահմանված պատիժ նշանակելու, հանցանք չկատարած անձանց անպարտ ճանաչելու և արդարացնելու միջոցով»:

Այսպիսով, ըստ գործող օրենսդրության, վարչական արդարադատությունը ներառում է «վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և լուծելու» գործընթացը: Նման մոտեցումը որևէ ընդհանուր եզր չունի վարչական արդարադատության տեսության հետ, ինչին մենք դեռ կանդրադառնանք ստորև: Նշենք միայն, որ սույլ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և լուծելու գործընթացի տեսքով վարչական արդարադատությունը ներկայացնելը հիմնականում պայմանավորված է խորհրդային իրավունքի համակարգի առանձին տարրերի պահպանմամբ:

Հայ իրավագետներից քչերն են անդրադարձել վարչական արդարադատության հիմնախնդիրներին: Որպես կանոն՝ հիշյալ հարցադրումները հետազոտման առարկա են դարձել միայն այնքանով, որքանով դրանք այս կամ այն չափով առնչվել են ուսումնասիրության բուն թեմային²: Այնուամենայնիվ, դրանք բովանդակում են արժեքավոր էլակետային դրույթներ, որոնք հնարավորություն են տալիս առավել հստակ պատկերացում կազմելու վարչական արդարադատության հայեցակետի ձևավորման հնարավոր տարբերակների մասին:

Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության ձևավորմանն առնչվող հիմնախնդիրների համակողմանի հետազոտումն ապահովելու համար նպատակահարմար է ուսումնասիրել այդ հասկացության բնորոշման հիմնական ուղղությունները, դրանց տեսական ակունքներն ու զարգացման հնարավոր միտումները:

Ինչպես հայտնի է, ֆրանսիական հեղափոխության և Առաջին կայսրության տարիներին վարչական մարմինների դեմ բերված բողոքների քննության ու լուծման համար վարչական դատարանների ստեղծումը սուր տարածայնությունների տեղիք տվեց: Նշված ինստիտուտի անհրաժեշտությունը առանձնակի կրքոտությամբ էին վիճարկում պահպանողական քաղաքական ուժերը: Ընդ որում, ըստ վարչական արդարադատության հակառակորդների՝ հատուկ վարչական դատարանների ստեղծումը հակասում է իշխանությունների տարանջատման սկզբունքին: Նրանք հիմք էին ընդունում այն մոտեցումը, որ միևնույն մարմնի մեջ վարչական և դատական գործառնությունների համատեղումն անընդունելի է Օ. Մոնտեսքյույի կողմից առաջ քաշված ազատության գաղափարի տեսանկյունից³:

Այս պարագայում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իշխանությունների տարանջատման սկզբունքին զուգահեռ «հակակշիռների» և «զսպումների» վերաբերյալ Ջոն Լոքի, իսկ այնուհետև Օ. Մոնտեսքյույի ուսմունքը դեռևս համընդհանուր

² Տե՛ս Հ. Խաչատրյան, Սահմանադրական վերահսկողություն և սահմանադրական դատարան, Եր., 1993, Գ. Հարությունյան, Սահմանադրական վերահսկողություն (համեմատական վերլուծություն), Եր., 1997, 1999, Ռ. Պետրոսյան, Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում 19-20-րդ դարերում, Եր., 2001, Գ. Арутюнян, Конституционный суд в системе государственной власти (сравнительный анализ). Ер., 1999:

³ Տե՛ս А. Дэйси, Основы английского государственного права, Лондон, 1906, էջ 205:

ճանաչում չէր գտել⁴։ Բոլոր դեպքերում, վարչական արդարադատության անհրաժեշտության վերաբերյալ բանավեճերը շարունակվել են մինչև XIX դարի վերջը⁵։ Միաժամանակ հարկ է նկատել, որ առանձին դեպքերում որոշ տարածայնություններ են դրսևորվել հետագայում։

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարչական արդարադատության ինստիտուտի անհրաժեշտության հիմնախնդիրը սուկ տեսական բանավեճի նյութ չի եղել. այդ խնդրի նկատմամբ շահագրգիռ հետաքրքրություն են դրսևորել նաև պետական գործիչները։ Եվ եթե տեսաբանների բանավեճերը սուկ որոշակի ազդեցություն են ունեցել տեսության ձևավորման վրա, ապա այս դեպքում դրանք ունեցել են կոնկրետ գործնական և, միաժամանակ, խիստ հակասական դրսևորումներ։ Այնպես, Բելգիայում վարչական արդարադատության ինստիտուտը, անցնելով ձևավորման ու զարգացման բավականին երկար ճանապարհ, վերացվել է 1831 թ. և վերականգնվել միայն 1946 թ.։ Այդ ինստիտուտը 1933 թ. «ավելորդ» ու «անօգուտ» համարվեց նաև Գերմանիայում և վերականգնվեց միայն «երրորդ ուլտիխ» կործանումից հետո՝ 1946 թ.։

Որպես կանոն՝ պետական գործիչներն իրենց դիրքորոշումը փորձել են «հիմնավորել» այն «անհիմաստ վտանգով», որ անխուսափելիորեն կարող է ծագել գործադիր իշխանության անկախության պարագայում⁶։ Տվյալ դեպքում նշված ժամանակահատվածի պետական գործիչների «անհանգստության» պատճառները պարզ են և, կարծում եմ, մեկնաբանությունների կարիք չունեն։ Նկատենք, սակայն, որ այդ փաստարկները ներկայումս ևս կարելի է հաշվի առնել վարչական արդարադատության տեսության ձևավորման արդի միտումները վերլուծելու համար։

Մասնավորապես, կարծում ենք, որ վարչական արդարադատության ինստիտուտը պատկանում է ժողովրդավարական այն ինստիտուտների թվին, որոնք առավել ընդգծված են արտացոլում ժողովրդավարության խորքային հատկանիշները և առավել համարժեքորեն են կանխորոշում ժողովրդավարության կայացման չափանիշները. չի կարող իրավակարգը ժողովրդավարական համարվել, եթե բավարար չափով չեն ձևավորվել վարչական արդարադատության ինստիտուտի տարրերը։ Վարչական արդարադատության պարագայում սուկ հոչակագրային բնույթի արտաքուստ ժողովրդավարական շղարշ ունեցող հայտարարություններն անօգուտ են. այս ինստիտուտը փաստացի գործում է միայն այնտեղ, որտեղ հիրավի ձևավորվել են արմատական ժողովրդավարական ավանդույթներ։ Պատահական չէ, որ նշված ինստիտուտը մերժվում կամ լավագույն դեպքում սուկ վերապահումով է ընդունվում միայն այն դեպքում, երբ կառավարման ձևերն ու պետական ռեժիմները գերապատվությունը տալիս են բոնապարտական տարրերին։ Որքան հասարակությունը պատրաստ է լինում ընդունելու կառավարման ժողովրդավարական եղանակները, նույնքան կիրառելի է դառնում վարչական արդարադատության ինստիտուտը։

Այսպիսով, վարչական արդարադատությունը պատկանում է այն ինստիտուտների թվին, որոնք որևէ կերպ չեն կարող «օգտագործվել» կեղծ ժողովրդավարության ռազմավարությունում, քանի որ այդ ինստիտուտի առկայությունն

⁴ Տե՛ս **Дж. Локк**, Избранные философские произведения, М., 1960, **Ш. Монтескье**, Избранные произведения, М., 1955։

⁵ Տվյալ դեպքում նկատի չունենք արդեն XX դարում խորհրդային վարչակարգի կողմից իշխանությունների տարանջատման սկզբունքի, առավել ևս «հակակշիռների» և «զսպումների» ինստիտուտների իսպառ ու միանշանակ բացառումը, ինչը որևէ կերպ չէր կարող համահունչ լինել հիշյալ երևույթների նկատմամբ արդեն իսկ ձևավորված պատկերացումներից։

⁶ Տե՛ս **Н. Водовозов**, Административная юстиция. “Энциклопедический словарь, Брокгауз и Эфрон”, т. 1, СПб., 1890, էջ 141-142։

անպայմանորեն ենթադրում է կոնկրետ իրավական հետևանքներ: Նույնիսկ կո-
նուպցիայի և տարաբնույթ չարաշահումների առկայության պարագայում այդ
ինստիտուտը հնարավորություն է տալիս բացահայտելու ժողովրդավարության
բնականոն գործընթացի փաստացի արգելքները:

Հարկ է նշել, որ վարչական արդարադատության ինստիտուտի կողմնակից-
ները դեռևս XIX դարում հիմնավորում էին, որ վարչական դատարանները նույն-
պես կարող են գործել անկախ, որ կառավարման համակարգում դրանց գտնվելը
չի բացառում վերջիններիս գործունեության անկախությունը: Իսկ այդպիսի դա-
տարանների ստեղծման անհրաժեշտությունը զուտ պրագմատիկ առումով պատ-
ճառաբանվում էր այն հանգամանքով, որ այդ դատարանների գործունեության ա-
ռարկան տարբերվում է իր առանձնահատուկ որակով. դա մի ուրույն ոլորտ է, որն
էապես զանազանվում է քրեաիրավական և քաղաքացիաիրավական ընթացա-
կարգերից, որտեղ առանցքայինը համարվում է պետական կառավարման կամ
պաշտոնատար անձի դեմ «չարքային» քաղաքացու բողոքը:

Վարչական արդարադատության տեսության ձևավորման վրա զգալի ազդե-
ցություն է ունեցել կոնկրետ ինստիտուտների գործնական կիրառման ընդհանուր
վիճակը: Այս առումով, թերևս, օրինաչափ է, որ առաջին անգամ հենց Ֆրանսիա-
յում է գիտականորեն հիմնավորվել վարչական արդարադատության անհրաժեշ-
տությունը, և հենց այս երկրում են արվել առաջին հետազոտությունները: Նշված
ինստիտուտի նկատմամբ ուշադրության ցայտուն վկայություն է նաև այն, որ ար-
դեն 1817 թ. վարչական արդարադատության վերաբերյալ գիտական ուսումնա-
սիրությունների և համապատասխան օրենսդրության հիման վրա Փարիզի հա-
մալսարանում հիմնադրվեց վարչական իրավունքի ամբիոն: Ընդ որում, վարչա-
կան արդարադատությունը XIX դարի ֆրանսիացի հայտնի հետազոտողներ Ա.
Մաքսբելիի, Տ. Դյուտրի, իսկ այնուհետև գերմանացի իրավագետներ Ռ. Գնեյս-
տի, Լ. Շտեյնի և մյուսների կողմից ճանաչվել է որպես վարչական իրավունքի
կարևորագույն ինստիտուտ, տեղ գտել վարչական իրավունքի դասագրքերում և,
որպես կանոն, ուսումնասիրվել է «Հանրային իշխանության ինստիտուտը» և «Կա-
ռավարման ակտեր» թեմաներից հետո⁷:

Ըստ ֆրանսիացի իրավագետների՝ Ֆրանսիայում վարչական արդարադա-
տության ինստիտուտը, մասնավորապես Պետական խորհուրդն ունի բարձր
վարկ և նպաստում է վարչական ապարատի հեղինակության բարձրացմանը:
Անդրադառնալով այս խնդրին՝ ֆրանսիացի իրավագետ Մ. Լեսաժը կարծիք է
հայտնել, որ վարչական արդարադատության էությունը քաղաքացու իրավունք-
ները հարգելը և դրանք պաշտպանելու նպատակով վարչական դատարանների
կողմից վարչական մարմինների ակտերը ստուգելն է⁸:

Ֆրանսիայի վարչական արդարադատության համակարգում խոցելի է հա-
մարվում նաև այն, որ վարչական դատարանների և կառավարման մարմինների
առօրյա գործունեությունը խիստ մեկուսացված է, ինչի հետևանքով բողոքարկ-
ման գործընթացը բավարար չափով մատչելի չէ հասարակության լայն զանգ-
վածներից: Ըստ Ռ. Շարվենի՝ քաղաքացին հաճախ վարչական դատարան չի դի-
մում այն մտավախությամբ, որ վերջինիս միջամտությունը կարող է իր համար
անցանկալի հետևանքներ ունենալ և տեղիք տալ իրավունքների նոր խախ-
տումների վարչական մարմինների կողմից, որոնցից ինքն առավել է կախված⁹:

⁷ Տե՛ս **В. В. Ивановский**, Наука административного права в прошлом и настоя-
щем, «Вестник права», 1906, № 7, էջ 142-148:

⁸ Տե՛ս **М. Лесаж**, Судебный контроль за администрацией во Франции. «Совет-
ское государство и право», 1981, № 11, էջ 106:

⁹ Տե՛ս **Р. Шарвен**, Юстиция во Франции, М., 1978, էջ 101-102:

Կարծում ենք, որ Ռ. Շարվենի եզրահանգումը արդիական է նաև Հայաստանի Հանրապետության պարագայում: Դիտարկումները վկայում են, որ կառավարման մարմինների ակտերն ու ապօրինի գործողությունները դատական կարգով բողոքարկման անհամեմատ ցածր մակարդակը պայմանավորված են հենց այդ մտավախությամբ և հետո միայն իրավունքների մասին ոչ բավարար իրազեկությամբ: Իհարկե չպետք է անտեսել նաև մի շարք այլ սոցիալ-հոգեբանական հանգամանքներ, որոնք նույնպես վճռորոշ դեր ունեն գործադիր իշխանության նկատմամբ դատական վերահսկողության կիրառման գործում:

Վարչական արդարադատության ինստիտուտի գիտական մեկնաբանությանը զգալի տեղ են հատկացրել նաև գերմանացի հետազոտողները: Ընդ որում, այդ բնույթի գիտական հետազոտությունների համար Գերմանիայում արդեն XIX դարի վերջերին ձևավորվել էր վարչական արդարադատության վերաբերյալ օրենսդրության անհրաժեշտ համակարգ: Գերմանացի հետազոտողների շրջանում առավել նկատելի է վարչական արդարադատությունը որպես իրավական պետության երաշխիք ներկայացնելու, այդ իրավական երևույթների միջև սերտ ու անմիջական կապ տեսնելու ձգտումը:

Վարչական արդարադատության բնորոշման հիմնախնդիրներն իրենց արտացոլումն են գտել հատկապես Ռ. Գնեյստի, Լ. Շտեյնի և Օ. Մայերի աշխատություններում: Ռ. Գնեյստի կարծիքով, վարչական իրավունքը քաղաքացիների և պետական ծառայողների պարտականությունների այնպիսի համակարգ է, որից բխում են նրանց իրավունքները: Սակայն ածանցված լինելով պարտականություններից՝ վերջիններիս դերը բնավ չի նսեմացվում, այլ առավել է ընդգծվում դրանց պաշտպանության անհրաժեշտությունը: Իսկ պաշտպանության հիմնական լծակները կարող են համարվել վարչական արդարադատության ինստիտուտը և, մասնավորապես, վարչական դատարանները: Ռ. Գնեյստը գտնում է, որ վարչական արդարադատության մասին ուսմունքը իրավական պետության տեսության ծանրության կենտրոնն է¹⁰:

Վարչական արդարադատության վերաբերյալ գերմանացի հետազոտողների կողմից մշակված հայեցակետը՝ կապված ժողովրդավարական ինստիտուտների զարգացման ընդհանուր վիճակի հետ, որոշակի է վոլյուցիա է ապրել: Մասնավորապես, մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը գերիշխել է այն տեսակետը, որ դատական կարգով բողոքարկման առարկա կարող են լինել գործադիր իշխանության միայն որոշ իրավական ակտեր և միայն վարչական կարգով դրանց քննարկումից հետո: Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գերմանացի տեսաբանները արմատապես փոխեցին իրենց պատկերացումները վարչական արդարադատության ինստիտուտի կիրառման սահմանների վերաբերյալ. առավել ընդունելի և հիմնավորված համարվեց գործադիր իշխանության մարմինների բոլոր իրավական ակտերը բողոքարկման առարկա դարձնելու տեսակետը¹¹:

Վարչական արդարադատության հասկացության շուրջ ծավալված բանավեճում առավել հետաքրքիր ու գործնական բնույթ են կրում գերմանացի հետազոտողների կողմից բարձրացված հարցադրումները՝ կապված վարչական արդարադատության հիմնական նպատակաուղղվածությունը պարզելու հետ. այն ուղղված է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության¹²ը, թե՞ օբյեկտիվ իրավակարգի պահպանմանը: Ընդ որում, դեռևս չի ձևավորվել մեկ միասնական մոտեցում: Այս հարցադրումը կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության պարագայում վարչական արդարադատության հայեցակետի ձևավորման տեսանկյունից:

¹⁰ Տե՛ս Ք. Гнейст, Правовое государство и административные суды Германии, СПб., 1896, էջ 16:

¹¹ Տե՛ս С. Уле, Verwaltungstrozebrecht, München, 9 Aufl. 1987, էջ 32:

հարկ է նկատել, որ այս դեպքում անխուսափելիորեն ծագում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության և օրինականության միջև ընտրություն կատարելու, դրանցից մեկին նախապատվություն տալու խնդիր, ինչի մասին հանգամանորեն կխոսենք ստորև:

Մեկ այլ կարևոր հանգամանք ևս. Գերմանիայի Հիմնական օրենքի 19 հոդվածը (4-րդ կետ) ամրագրում է գործնականում «անուղղելի վարչական ակտերը» առավելագույնս բացառելու սկզբունքը, ինչը հնարավորություն է տալիս լայնորեն կիրառել այդ ակտերի նախնական վերահսկողության ինստիտուտը: Նկատենք, որ այդ ինստիտուտը չի տարածվում վարչական վարույթի բոլոր փուլերի վրա:

Վարչական արդարադատության տեսությունը լուրջ առաջընթաց է ունեցել նաև Մեծ Բրիտանիայում: Նախ, հարկ է նկատել, որ անգլոսաքսոնական երկրներում քաղաքացու և վարչական մարմինների միջև վեճերը քննարկվում են ընդհանուր դատազրույթյան դատարաններում քաղաքացիական գործերի քննության համար նախատեսված ընթացակարգով: Այս առանձնահատկության վրա ուշադրություն են դարձրել ռուս իրավագետները դեռևս XX դարի սկզբներին¹³: Միաժամանակ զարգացման միտումներն այնպիսին են, որ աստիճանաբար մեծ տեղ է հատկացվում կվազիդատարաններին, որոնք քննարկվող ոլորտում դեռևս երկրորդական դեր ունեն:

Մեծ Բրիտանիայում ընդունված է այն տեսակետը, համաձայն որի կվազի-դատարանները պետք է գործեն ընդհանուր դատազրույթյան դատարանների վերահսկողության ներքո¹⁴: Ընդ որում, այդ տեսակետն իր օրենսդրական ամրագրումն է ստացել 1958 թ. «Դատարանների և դատավարության մասին» օրենքում, որը սահմանում է վարչական վեճեր քննող կվազիդատարանների գործունեության միասնական իրավական հիմքերը: Միաժամանակ հարկ է նշել, որ վարչական արդարադատության իրականացման որևէ միասնական դատավարական կարգ սահմանված չէ, ինչը պայմանավորված է անգլիական իրավունքի հանրաժանոթ սկզբունքներով:

Վերլուծելով Մեծ Բրիտանիայի կվազիդատարանների գործունեության առանձնահատկությունները՝ իրավագետները հանգում են այն եզրակացությանը, որ վերջիններիս բնորոշ են հատկապես հետևյալ առավելությունները՝ գործերի քննության արագություն, վեճերի որոշակի տեսակների քննության մեջ մասնագիտացում, քննության ընթացքում իրավական ակտերի կիրառման ճկունություն, գործերի քննության դատավարական խիստ ընթացակարգի բացակայություն, դատական ծախսերի նվազեցում և վարչական մարմինների որոշումներն ու գործողությունները բողոքարկելու մատչելիություն¹⁵:

Նկատի ունենալով, որ վերջին շրջանում անգլիական իրավագետներն իրենց հայացքներով ավելի ու ավելի են մոտենում իրավունքի մայրցամաքային սկզբունքներին, վարչական արդարադատության վերաբերյալ տեսությունում ևս նկատվում է եվրոպական վարչական իրավունքի, մասնավորապես Եվրախորհրդի կողմից կառավարման խնդիրների վերաբերյալ ընդունված չափանիշներին հետևելու միտում: Անգլիացի իրավագետները քննարկվող խնդրում էլակետ են ընդունում այն հանգամանքը, որ կառավարությունն և անհատ փոխհարաբերություններում անհրաժեշտ է կիրառել միջազգային չափանիշները, քանզի դրանք ուղղակիորեն առնչվում են մարդու իրավունքների հիմնախնդիրների հետ¹⁶:

¹³ Տե՛ս **А. И. Елистратов**, Учебник русского административного права, М., 1914, **А. М. Кулишер**, Защита субъективных публичных прав, «Юридический вестник», кн. 4, 1913:

¹⁴ Տե՛ս «Общая теория прав человека», 1996, էջ 411-414:

¹⁵ Տե՛ս **О. Н. Ведерникова**, Административная юстиция (опыт зарубежных стран). Судебная реформа: итоги, приоритеты, перспективы. Материалы конференции. Сер. «Науч. доклады», № 47, М., 1997, էջ 57:

¹⁶ Տե՛ս J. Schwarze, Die gerichtliche Kontrolle der Verwaltung in England. London, Dov., 1996, էջ 774-776:

Բոլորովին այլ դիրքորոշում ունեն իրավունքի անգլուսաքսոնական համակարգին պատկանող մեկ այլ երկրի՝ ԱՄՆ-ի իրավագետները: Ընդհանրապես, ԱՄՆ-ի և՛ կառավարման մարմինների, և՛ վարչական արդարադատության ինստիտուտի համակարգն էապես տարբերվում է եվրոպականից: Հիմնական առանձնահատկությունը թերևս այն է, որ ԱՄՆ-ի վարչական արդարադատությունն իրենից ներկայացնում է գլխավորապես կառավարման մարմիններում կվազիդատական գործառույթներ իրականացնող մարմինների և պաշտոնատար անձանց համակարգ, որտեղ վարչական արդարադատության մարմինները հանդես են գալիս որպես «դատավորներ իրենց սեփական տանը»¹⁶: Ընդ որում, նշված մարմինները զգալիորեն ավելի շատ են վեճեր քննում, քան ընդհանուր դատազրության դատարանները:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության դատական իշխանության և, մասնավորապես, վարչական արդարադատության պատմական անխաղրչյալները կապված են Ռուսաստանի իրավունքի համակարգի հետ, անպատկահարմար ենք գտնում քննարկվող հարցերի առնչությամբ առավել հանգամանորեն վերլուծել ռուս իրավագետների տեսակետները: Ռուսաստանում վարչական արդարադատության ինստիտուտին առաջիններից մեկը անդրադարձել է ճանաչված իրավագետ Ի. Ե. Անդրեևսկին, որը Ն. Ն. Բերյոզինի 1873 թ. հանրագիտական բառարանում հանդես է եկել վարչական դատարանների բնորոշմանը մվիրված հոդվածով: Ի. Ե. Անդրեևսկին վարչական դատարանների գործառույթը ներկայացրել է որպես «հատուկ վարույթ», որն առնչվում է օրենքով ընդհանուր դատազրության դատարաններին վերապահված վեճերի քննությանը: Ըստ հեղինակի՝ այդպիսի դատական համակարգի տարրեր բովանդակվում են 1864 թ. դատական կանոնադրությունները, որոնց համաձայն մասնավոր անձանց և պետական մարմինների միջև վեճերի քննությունը հանձնվել է հաշտարար դատարաններին¹⁷:

Սակայն XIX դարի 70-ական թվականներին ռուս իրավագետների համար վարչական արդարադատության հիմնախնդիրները չեն համարվել հրատապ ու արդիական: Վարչական իրավունքին մվիրված այդ ժամանակահատվածի գիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշյալ հարցադրումները հազվադեպ են դարձել գիտական հետազոտության առարկա: Նշված ինստիտուտի վերաբերյալ գիտական աշխատություններ քիչ են գրվել ընդհուպ մինչև XIX դարի վերջը: Բացառություն է 1879 թ. հրատարակված Ն. Օ. Կուպլևասկու՝ արևմտյան վարչական արդարադատությանը մվիրված մեծագրությունը¹⁸: Թերևս այդ շրջանի աշխատություններից կարելի է առանձնացնել Ի. Տ. Տարասովի, Ն. Մ. Կորկունովի, Ս. Ա. Կորֆի և Ա. Ի. Ելիստրատովի հետազոտությունները:

Ի. Տ. Տարասովն իր աշխատություններում ընդգծել է վարչական դատարանի դերը վարչական մարմինների գործունեության նկատմամբ իրավական վերահսկողություն իրականացնելու գործում: Լինելով ոչ միայն գիտական, այլև պրակտիկ աշխատող՝ Ի. Տ. Տարասովը քաջատեղյակ էր ռուսական վարչարարության բացթողումներին ու հիմնախնդիրներին և առավել հետևողականություն է դրսևորել վարչական արդարադատության ինստիտուտի ձևավորման խընդրում, վարչական մարմինների ակտերի և գործողությունների դեմ քաղաքացիների

¹⁶ Տե՛ս «Административное право зарубежных стран. Учебное пособие», М., 1996, էջ 25-27:

¹⁷ Տե՛ս **И. Е. Андреевский**, Административный суд. «Русский энциклопедический словарь И. Н. Березина», т. 1, СПб., էջ 241-242:

¹⁸ Տե՛ս **Н. Ц. Куплеваский**, Административная юстиция в Западной Европе, Харьков, 1979:

կողմից դատարանում բողոքներ բերելու ինստիտուտը դիտելով որպես «վարչական անարդարությունների դեմ պայքարի ամենագործուն լծակ»¹⁹:

Վարչական արդարադատության հիմնախնդիրների նկատմամբ մեծ հետաքրքրություն է դրսևորել իրավունքի ճանաչված տեսաբան Ն. Մ. Կորկունովը: Վերջինս այդ ինստիտուտը հետազոտել է ընդհանուր տեսական մոտեցումներով՝ մեծ նշանակություն տալով վարչական արդարադատությունը քրեական և քաղաքացիական արդարադատություններից սահմանազատելու խնդրին²⁰: Ընդհանրապես, Ն. Մ. Կորկունովի աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարչական արդարադատությունը ոչ միայն վարչական իրավունքի մասնագետների, այլև տեսաբանների ու իրավունքի այլ ճյուղերի ներկայացուցիչների հետազոտությունների առարկա է եղել: Ընդ որում, եթե մինչև XIX դարի վերջերը առավել արդիական էին վարչական արդարադատությունը քրեական ու քաղաքացիական արդարադատությունից սահմանազատելու հիմնախնդիրները, ապա հետագայում դրանց ավելացել է նաև սահմանադրական արդարադատությունը սահմանազատելու խնդիրը: Հարկ է նկատել նաև, որ հետագա հետազոտություններում առավել բարդ ու միաժամանակ արդիական համարվեց հենց սահմանադրական արդարադատությունը վարչական արդարադատությունից սահմանազատելու խնդիրը:

Վարչական արդարադատության հիմնախնդիրների վերաբերյալ ցարական Ռուսաստանում հրատարակված աշխատություններից թերևս կարելի է առանձնացնել Ս. Ա. Կորֆի «Վարչական արդարադատությունը Ռուսաստանում» (1910) երկհատոր աշխատությունը, որում առավել ամբողջական ու բազմակողմանի է հետազոտված նշված ինստիտուտը: Հիշատակված աշխատությունում Ս. Ա. Կորֆը վարչական արդարադատությունը ներկայացնում է որպես կառավարման ակտերի դատական բողոքարկման ընթացակարգ, իսկ վարչական հայքը՝ որպես անհատի (քաղաքացու) սուբյեկտիվ հանրային իրավունքների պաշտպանության միջոց: Միաժամանակ Ս. Ա. Կորֆը որևէ էական նշանակություն չի տվել այն հարցադրմանը, թե ինչպիսի դատական մարմնի միջոցով պետք է իրականացվի վարչական արդարադատությունը՝ ընդհանուր դատազորությամբ, թե՞ հատուկ դատական ատյանների կողմից²¹:

XX դարի սկզբին վարչական արդարադատության հիմնախնդիրներին նվիրված աշխատություններից առանձնապես մեծ ճանաչում է գտել Ա. Ի. Ելիստրատովի «Վարչական իրավունքի հիմնադրույթները» աշխատությունը: Վարչական արդարադատությունը դիտելով որպես մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության «հրապարակային-իրավական երաշխիք»՝ Ա. Ի. Ելիստրատովն այդ ինստիտուտի բնույթը տեսնում էր պաշտոնատար անձանց որոշումների ու գործողությունների դատական բողոքարկման մեջ: Ի տարբերություն Ս. Ա. Կորֆի՝ Ա. Ի. Ելիստրատովը բնավ երկրորդական չի համարել վարչական արդարադատության իրականացման համար հատուկ վարչական դատարաններ ստեղծելու կամ չստեղծելու մասին հարցը: Ա. Ի. Ելիստրատովի կարծիքով, միայն վարչական դատարաններ ստեղծելու միջոցով հնարավոր կլինի ապահովել վեճերի քննության ընդունելի մասնագիտական մակարդակ²²:

¹⁹ Տե՛ս **И. Т. Тарасов**, Организация административной юстиции. «Юридический вестник», 1897, № 9, էջ 158-159, *անլի՛* Административная юстиция: большие места нашей администрации. «Земство», 1882, № 52:

²⁰ Տե՛ս **Н. М. Коркунов**, Очерк теорий административной юстиции. «Журнал гражд. и уголов. права», 1885, № 7, 8, 9:

²¹ Տե՛ս **С. А. Корф**, Административная юстиция в России, т. 2, СПб., 1910, էջ 452-453, 472-477:

²² Տե՛ս **А. И. Елистратов**, Основные начала административного права, М., 1914, էջ 301-308:

Բոլորովին այլ դիրքորոշում որդեգրեց խորհրդային վարչական իրավունքը: Ի տարբերություն ցարական վարչական իրավունքի՝ խորհրդային վարչական իրավունքի դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում (սկսած Ա. Դենիսովի խմբագրությամբ 1949 թ. լույս տեսած դասական մարքսիստական ոգով գրված դասագրքից, ընդհուպ 1990 թ. Պ. Վասիլենկովի խմբագրությամբ հրատարակված դասագիրքը) ընդհանրապես անտեսվեց վարչական արդարադատության ինստիտուտի լուսաբանման անհրաժեշտությունը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հիշյալ մոտեցումը միանշանակ չի եղել և անցել է վերաիմաստավորման որոշ փուլեր: Խորհրդային իշխանության առաջին տարիներին վարչական արդարադատության ինստիտուտը համարվել է խիստ արդիական ու հրատապ. խորհրդային պետական համակարգում կամայականությունների դեմ պայքարի անհրաժեշտության խնդրին բազմիցս անդրադարձել են բոլշևիկյան առաջնորդներ Վ. Լենինը, Լ. Տրոցկին, Գ. Զինովևը և այլք: Թերևս դրանով պետք է բացատրել արդեն 1921 թ. Մոսկվայի պետական համալսարանին կից Խորհրդային իրավունքի ինստիտուտի կողմից վարչական արդարադատության մասին դեկրետի նախագծի մշակման հանգամանքը: Հենց այդ ժամանակ էլ նախատեսվել էր մշակվելիք վարչական օրենսգրքում ներառել դրույթներ նաև վարչական արդարադատության ինստիտուտի վերաբերյալ:

Խորհրդային իշխանության վաղ շրջանում իրավագետների մեծ մասը նույնպես գիտակցում էր վարչական արդարադատության ինստիտուտը խորհրդային իրավունքի համակարգում ներառելու անհրաժեշտությունը²⁴: Այդ աշխատություններում ընդգծվում է, որ խորհրդային պետական համակարգում արդեն իսկ գործող հողային, բնակարանային հանձնաժողովներն ու նմանաբնույթ այլ մարմինները կարող էին համարվել վարչական արդարադատության նախատիպ, իսկ որպես ավարտուն համակարգի նմուշ էին ճանաչվում Ֆրանսիայի և Գերմանիայի վարչական դատարանները:

Հիշյալ տեսակետները ոչ միայն հետագա զարգացում չունեցան, այլև աստիճանաբար, բայց խիստ հետևողականորեն իրենց տեղը զիջեցին վարչական արդարադատությունը որևէ կերպ չհամադրվող տեսություններին: Նախ՝ ի հայտ եկան հեղինակներ, որոնք, սկզբնական շրջանում զգուշություն ցուցաբերելով, փորձում էին սուկ հիմնավորել, որ ցարական իրավակարգին բնորոշ արդարադատության ինստիտուտը չի կարող կիրառելի լինել խորհրդային պետությունում, իսկ այնուհետև անցան առավել կտրուկ որակումների՝ այդ ինստիտուտը դիտելով «որպես հարձակում վարչական ապարատի դեմ», ինչը նույնացվում էր խորհրդային իշխանության դեմ ուղեղվածության հետ²⁵:

Այնհայտ անհիմն այս տեսությունը, ցավոք, ունեցավ երկարատև կյանք և գույտնեց ընդհուպ մինչև վերակառուցման տարիները: Որոշ վերապահումներով, վարչական արդարադատության ինստիտուտի անհրաժեշտության վերաբերյալ ցանկացած հրապարակում²⁶ միանշանակ արժանանում էր բացասական վերաբերմունքի: Հիմնական փաստարկն այն էր, որ վարչական արդարադատությունը բուրժուական ինստիտուտ է, ուստի անկարելի է այն «համատեղել պետական կառավարման սոցիալիստական համակարգի հետ»²⁶:

²⁴ Տե՛ս **А. Ф. Евтихийев**, Основы советского административного права, М., 1925, էջ 316, **М. Д. Загряцков**, Административная юстиция и право жалобы, 1925, № 4, էջ 71-83:

²⁵ Տե՛ս **К. Носов**, По вопросу о теории советской административной юстиции, «Советское право», 1925, № 4, էջ 75, **А. С. Сухоплюнов**, Административная юстиция, БСЭ, т. 1, М.-Л., 1924, էջ 124-125:

²⁶ Տե՛ս **Н. Г. Салищева**, Административный процесс в СССР, М., 1964, էջ 87-96, **В. И. Ремнева**, Право жалобы, М., 1964:

²⁶ Տե՛ս **В. А. Лория**, Существует ли административная юстиция в советском праве?, «Правоведение», 1970, № 1, էջ 110-114:

Նկատի ունենալով, որ զուտ մասնագիտական այդ բանավեճը որոշ իրավագետների կողմից տեղափոխվում էր քաղաքական հարթություն և անվերապահորեն որակվում որպես խորհրդային իշխանության դեմ քողարկված ոտնձգության փորձ. այդ պատճառով առավել հետադարձ և հիմնախնդրի նկատմամբ հիրավի գիտական մոտեցման կողմնակից մի շարք տեսաբաններ իրենց աշխատություններում ուշադրությունը բեռեցին հիմնականում այն կովանի վրա, որ արդարադատության ինստիտուտը, վերջին հաշվով, անհրաժեշտ է ոչ այնքան մասնավոր անձին, որքան պետությանը, քանի որ հուսալի երաշխիք է պետական կառավարման ապարատում օրինականության և իրավակարգի ամրապնդման: Սա արդեն նոր մոտեցում էր, որը թեև հիմնականում թելադրված էր ռազմավարական նպատակներով (պարզապես խնդիր էր դրվել չեզոքացնել իբր զուտ պետականամետ շահերով դեկավարվող գիտնականների նկրտումները), բայց այն իրոք բովանդակում էր անվիճելի ճշմարտություն. վարչական արդարադատությունը, ինչպես և արդարադատության ցանկացած դրսևորում, անմիջականորեն ծառայում է օրինականության և իրավակարգի ամրապնդման խնդրին:

Վարչական արդարադատության ինստիտուտին առնչվող հարցադրումների գիտական հետազոտությունը, սկսած 1990-ական թվականների սկզբից, թևակոխեց որակապես նոր փուլ: Այս շրջանում ձևավորված հայեցակարգն առանձնանում է ժողովրդավարության չափանիշներին առավել համահունչ մնալու միտումով: Հատկապես արժեքավոր մեծագրություններ հրատարակվեցին Ն. Սալիշևայի, Դ. Բախրախի, Վ. Բոյցովայի, Ն. Խամենևայի, Յու. Ստարիլովի, Մ. Ստուդենիկիհի, Յու. Տիխոմիրովի և այլոց կողմից:

Նպատակահարմար ենք գտնում հպանցիկ վերլուծել հիշյալ ինստիտուտի նկատմամբ ձևավորված նոր մոտեցումների էությունը, հիմնարար ուղղությունները և առավել բնորոշ հատկանիշները: Այսպես, Ն. Խամենևան վարչական արդարադատությունը բնորոշել է որպես «քաղաքացու և պետական կառավարման մարմնի միջև ծագած վեճի քննարկման ընթացակարգ»²⁷: Հեղինակը միմյանցից տարանջատել է վարչական իրավագործություն, վարչական գործերով արդարադատություն և վարչական արդարադատություն հասկացությունները: Առաջին հայացքից այսպիսի բնորոշման անսովորությունը և ինչ-որ չափով ստանդարտներից դուրս գտնվելը, մեր կարծիքով, պայմանավորված են ոչ միայն նյութի նկատմամբ հեղինակի ինքնատիպ մոտեցմամբ, այլև Ռուսաստանի Դաշնության իրավական համակարգի առանձնահատկությամբ: Նկատի ունենք այն, որ, ինչպես և Հայաստանի Հանրապետությունում, Ռուսաստանի Դաշնությունում դեռևս պահպանվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ դատական և արտադատական կարգով գործեր քննելու ինստիտուտը, ինչը ենթադրում է, որ վարչական արդարադատությանը զուգահեռ գոյության իրավունք կարող է ունենալ նաև, այսպես կոչված, վարչական գործերի դատական քննության ընթացակարգը:

Մեր կարծիքով, սակայն, վարչական գործերով իրականացվող արդարադատությունը վարչական արդարադատությունից սահմանազատելու խնդիր չի կարող դրվել, քանի որ այդ ինստիտուտները որևէ ընդհանուր հիմքով չեն կարող միավորվել դասակարգման մեկ միավորի մեջ. դրանք արդարադատության իրականացման նույնպիսի տարատեսակներ են, ինչպես արդարադատության մյուս բոլոր տարատեսակները: Ըստ էության, առավել արդիական է վարչական գործերով արդարադատությունը քրեական գործերով արդարադատությունից սահմանազատելու և դրանց միջև զուգահեռներ անցկացնելու խնդիրը, որը քննության բոլորովին այլ թեմա է:

²⁷ Տե՛ս Н. Ю. Хаменева, Защита прав граждан в сфере исполнительной власти, М., 1997, էջ 115:

Առավել ողջունելի են այն հեղինակների քայլերը, որոնք վարչական արդարադատության ինստիտուտը դարձյալ ներառեցին վարչական իրավունքի համակարգում և իրենց աշխատություններում այն ներկայացրեցին իրավունքի այդ ճյուղի անքակտելի մաս: Իր աշխատություններում Յու. Ստարիլովը վարչական արդարադատությունը համարում է վարչական իրավունքի ճյուղին առնչվող արդարադատության տարատեսակ, որն իրականացվում է վարչական իշխանության կամ տեղական ինքնակառավարման ոլորտներում²⁸:

Դժվար է չհամաձայնել այն հեղինակների հետ, որոնք կարծում են, որ վարչական արդարադատության ինստիտուտն անհրաժեշտ է ոչ այնքան քաղաքակրթության և ժողովրդավարության առավել բարձր ցուցանիշների հասած երկրներին, որքան Ռուսաստանին, որտեղ ձևավորված ավանդույթներով պետության (դրա պաշտոնյաների) միջամտությունը հասարակության գործերին անհամեմատ մեծ տեղ ունի: Իսկ եթե նկատենք, որ իրավական համակարգի, ձևավորված ավանդույթների և մի շարք այլ սոցիալական հատկանիշների տեսանկյունից գրեթե նույն իրավիճակում է նաև մեր երկիրը, ապա վստահորեն կարելի է ասել, որ այդ կարծիքը հավասարապես վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը: Առանձին գիտնականներ սկսեցին առավել հետևողականորեն առաջ քաշել վարչական դատարաններ ստեղծելու գաղափարը: Վ. Բոյցովայի կարծիքով վարչական արդարադատության առանցքային հատկանիշն ընդհանուր իրավագործությամբ օժտված դատարաններից զատված վարչական դատարաններ ստեղծելն է²⁹:

Վարչական արդարադատության ինստիտուտը խորը ուսումնասիրության թեմա է նաև հանրահայտ իրավագետ Յու. Տիխոմիրովի համար: Վերջինս, նույնպես համամիտ լինելով վարչական արդարադատության հասկացության բնորոշման՝ արդեն իսկ հայտնի մոտեցումներին, փորձել է առանձնացնել այն տարրերը, որոնցով այդ ինստիտուտը տարբերվում է դատական իշխանության մյուս ճյուղերից. կադրերը (վարչական դատավորներ), ակտերը (կառավարման ակտերը վերացնելու մասին վճիռները) և ընթացակարգը: Հեղինակը լավատեսորեն եզրակացնում է, որ ստեղծված իրավիճակում առկա են իրական պայմաններ վարչական արդարադատությանն անցնելու համար. նույնիսկ առաջարկել է արդարադատության այդ տարատեսակի իրականացման դատական ատյանների համակարգ՝ Դաշնային բարձրագույն վարչական պալատ և վարչական կոլեգիաներ՝ հանրապետությունների Գերագույն դատարաններում ու մարզերի դատարաններում³⁰:

Այդուհանդերձ, հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության ներկայիս ֆինանսական ոչ այնքան բարվոք վիճակը՝ որոշ հեղինակներ, ընդունելով հանդերձ վարչական դատարանների ստեղծման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ առաջարկում են, որպես անցումային տարբերակ, ընդհանուր դատազորության դատարաններում առանձնացնել հատուկ վարչական վեճեր քննող դատավորների հաստիք, իսկ վերադաս դատական ատյաններում՝ համապատասխան լիազորություններով օժտված ստորաբաժանումներ: Բացի այդ, օրինակ, Ն. Գ. Սալիշևան այն կարծիքին է, որ որոշ գերատեսչություններում կարելի է ստեղծել կվազիդատական հիմնարկներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ինչպես

²⁸ Տե՛ս **Ю. Н. Стариков**, Административная юстиция. Проблемы теории, Воронеж, 1998, էջ 135-152:

²⁹ Տե՛ս **В. В. Бойцова**, Нужна ли нам административная юстиция? «Советская юстиция», 1993, № 7, էջ 12, **В. В. Бойцова**, **В. Я. Бойцов**, Административная юстиция, к продолжению дискуссии о содержании и значении, «Государство и право», 1994, № 5:

³⁰ Տե՛ս **Ю. А. Тихомиров**, Курс административного права и процесса, М., 1998, էջ 788-792:

տվյալ գերատեսչության պաշտոնյաներ, այնպես էլ արդարադատության նախարարության ներկայացուցիչներ և այլն”:

Այսպիսով, վարչական արդարադատության հասկացության բնորոշման հարցը պարբերաբար գտնվել է քաղաքականության ազդեցության ներքո, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ այդ ինստիտուտն առավել սերտ է առնչվում ժողովրդավարության հետ, առավել ամփիջականորեն է ներագրում գործադիր իշխանության շահերի վրա: Այս հանգամանքը հաշվի առնելով է, որ հայտնվել է այն ակնհայտ ծայրահեղ տեսակետը, թե այդ ինստիտուտը պարզապես ոտնձգություն է իշխանության շահերի դեմ: Սակայն պատմահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ինստիտուտից խուսափել և շարունակում են խուսափել միայն ժողովրդավարության տարրերը բացառող քաղաքական ուժերն են: Երբևէ վարչական արդարադատության ինստիտուտի մեկնաբանման հարցում չեն կարող անաչառ լինել, քանզի ակնհայտ կդառնա, որ իրենց մտահոգության առարկան իրականում ոչ թե իշխանության համընդհանուր շահերն են, այլ կամայականություններն ու կոռուպցիոն մյուս երևույթները քողարկելու նկրտումները:

Միաժամանակ պարզունակ կարող է համարվել սուկ քաղաքական շահարկումներով այդ ինստիտուտի հասկացության բնորոշման հետ կապված հիմնական գիտնականների առկայությունը բացատրելը: Կարևոր են նաև այնպիսի փաստարկները, ինչպիսիք են ժողովրդավարական ինստիտուտների ընդհանուր զարգացածությունը, պետական կառավարման մարմիններում և տեղական ինքնակառավարման համակարգում արձանագրված արմատական փոփոխությունները, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հայեցակետի վերահիմաստավորման նորագույն դրսևորումները և այլն:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ ժամանակակից իրավագիտությունն ընդունում է վարչական արդարադատության հասկացության բնորոշման հիմնականում երեք մոտեցում. այդ հասկացությունն օգտագործվում է լայն իմաստով, նեղ իմաստով և բուն իմաստով:

Հասկացության լայն իմաստով ըմբռնման կողմնակիցները հիմնականում ընդունում են իտալական վարչական իրավունքի գաղափարախոսությունը՝ նկատի ունենալով բոլոր այն վարչական ինստիտուտների ամբողջությունը, որոնք միտված են մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ գործադիր իշխանության մարմինների նկատմամբ հսկողության իրականացմանը: Այս մոտեցումը համեմատաբար քիչ տարածում ունի և աստիճանաբար ձևափոխվում է:

Վարչական արդարադատության հասկացության բնորոշման երկրորդ մոտեցման պարագայում վարչական հսկողության հետ մեկտեղ վճռորոշ նշանակություն է տրվում գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող դատական հսկողությանը, երբ հատուկ դատական մարմինները կամ ընդհանուր դատազորության դատարանները հատուկ ընթացակարգով քննում են գործադիր իշխանության դեմ ուղղված քաղաքացիների բողոքները:

Եվ, վերջապես, երրորդ դեպքում վարչական արդարադատությունը հանգեցվում է բացառապես հատուկ դատական համակարգի կողմից գործադիր իշխանության դեմ ուղղված բողոքների քննարկմանը: Սա, թերևս, համարվում է առավել ժողովրդավարական ինստիտուտ, որն, ինչպես արդեն նշվեց, բնորոշ է Անգլիային, Ֆրանսիային, Գերմանիային և այլն: Սակայն այս դեպքում ևս առկա են որոշ նրբերանգներ:

“Տե՛ս Н. Г. Салищева, О некоторых способах защиты и охраны прав, свобод и законных интересов граждан в сфере деятельности исполнительной власти в Российской Федерации. “Сборник. Конституция РФ и совершенствование механизмов защиты прав человека”, М., 1994, էջ 87:

Անգլոսաքսոնական իրավունքի համակարգին պատկանող երկրներում վարչական արդարադատություն ասելով նկատի է առնվում ընդհանուր դատազորության դատարանների համակարգից դուրս գտնվող դատական մարմինների կողմից վեճերի լուծումը: Այսպիսի մեկնաբանությունը, թերևս, բացատրվում է այս երկրներում քաղաքացիական, վարչական և սահմանադրական դատավարությունների միջև հստակ տարանջատման չգոյությունը³²: Գերմանական և ֆրանսիական հայեցակարգի տեսանկյունից վարչական մարմինների գործողությունների բողոքարկումն ընդհանուր դատազորության և կվազիդատարաններում հագիվ թե համարվի վարչական արդարադատություն այդ բառի բուն իմաստով: Ֆրանսիական հայեցակարգը մասնավորապես ելակետ է ընդունում այն տեսակետը, ըստ որի արդարադատության իրականացումը չի կարող համարվել դատարանների մենաշնորհը, որ հատկապես վարչական մարմինների նկատմամբ հսկողության շրջանակներում դա պետք է իրականացվի իրավունքի հատուկ սուբյեկտների կողմից: Հետազոտողների մի մասը հենց այս հայեցակարգի առկայությամբ է բացատրում այն հանգամանքը, որ Ֆրանսիայում, Գերմանիայում և մյուս երկրներում «վարչական արդարադատություն» հասկացությունն ընկալվում է որպես «վարչական յուրիսդիկցիա» հասկացության հոմանիշ³³:

Կարծում ենք, որ վերոհիշյալ բոլոր հարցադրումների համակողմանի վերլուծությունը հնարավորություն է տալիս առաջադրելու նշված հասկացության հետևյալ բնորոշումը. *վարչական արդարադատությունը քաղաքացու և հասարակական միավորումների իրավունքներն ու օրինական շահերը խախտող պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց օրենքին հակասող իրավական ակտերն ու գործողությունները (անգործությունը) բողոքարկելու դատավարական ընթացակարգն է:*

Մեր կողմից ներկայացված բնորոշման մեջ նոր որակ են կազմում հետևյալ առանձնահատկությունները՝

- վարչական արդարադատության ինստիտուտն իրավական և կազմակերպական լծակների համակեցություն է, որը հնարավորություն է տալիս իրավունքի մասնավոր սուբյեկտներին դատական կարգով վիճարկելու հանրային իշխանության ապօրինի ակտերը, պաշտպանելու իրենց սուբյեկտիվ իրավունքներն ու օրինական շահերը,

- այն առնչվում է այնպիսի վեճերի հետ, որոնք բացառապես արդյունք են վարչարարության զանազան դրսևորումների,

- իրականացվում է այնպիսի դատավարական կանոններով, որոնք որոշակի ընդհանրություններ ունեն ընդհանուր դատավարության սկզբունքների հետ,

- բողոքարկման լիազորությամբ օժտվում են ոչ միայն անհատ քաղաքացիները, այլև հասարակական միավորումները (նաև առանձին դեպքերում նշված սուբյեկտների շահերից հանդես եկող համապատասխան իրավասությամբ օժտված պետական մարմինները),

- բողոքարկման առարկա կարող են լինել ոչ միայն իրավական ակտերը, այլև գործողությունները (անգործությունը),

- պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կարգավիճակը վարչական արդարադատության ինստիտուտի շրջանակներում նույնական է,

³² Տե՛ս O. Philips Hood, P. Jackson, Constitutional and Administrative Law. London, 1988, էջ 636-638:

³³ Տե՛ս “Административное право зарубежных стран”, учебник, под ред. А. Н. Козырина и М. А. Шатиной. М., 2003, էջ 190-191:

- վարչական արդարադատությունն առնչվում է ոչ թե բոլոր պետական մարմինների, այլ միայն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը:

Վերը նշված մոտեցումը՝ հասկացության բնորոշման տեսքով, բնավ բավարար չէ այդ ինստիտուտի բնույթն ու զարգացման առավել հավանական ուղղությունները սպառնչ ներկայացնելու համար: Այդ հարցերին, կարծում եմք, հնարավորություն կունենանք անդրադառնալու հետագայում:

Г. Б. ДАНИЕЛЯН - Предпосылки определения понятия административной юстиции. - В статье рассматриваются некоторые вопросы исторического развития как самой административной юстиции, так и научных представлений о ней. Основная цель статьи состоит в том, чтобы сформулировать понятие административной юстиции как такого института, который выполняет функцию судебного контроля посредством административного иска, рассматриваемого по правилам административного судопроизводства.

Также обосновывается необходимость введения в Республике Армения административного судопроизводства. По мнению автора, административная юстиция должна быть выделена в самостоятельную ветвь судопроизводства.